



[165402]

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ԱՇԽԱՏԱՆՔԻ ԵՎ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՀԱՐՑԵՐԻ  
ՆԱԽԱՐԱՐ**

**Հ Ր Ա Մ Ա Ն**

«26» հունվարի 2016թ.

N 15 -Ա/1

**ՔՎՈՏԱՎՈՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՄԱՐ ՏՎՅԱԼ ՀԱՐԿԱՅԻՆ ՏԱՐՈՒՄ ՔՎՈՏԱՎՈՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ ԱՇԽԱՏԱՏԵՂԵՐԻ, ՏՎՅԱԼ ԱՄՍԿԱ ԴՐՈՒԹՅԱՄԲ ՔՎՈՏԱՅԻ ՊԱՀԱՆՋԸ ՉԿԱՏԱՐԱԾ ԱՇԽԱՏԱՏԵՂԵՐԻ ՔԱՆԱԿՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԻ ԵՎ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՀԱՐՑԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ԿԱՅՔԷՋՈՒՄ ՏԵՂԱԿԱՅԵԼՈՒ ԵՎ ԹԱՐՄԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2002 թվականի նոյեմբերի 14-ի N 1821-Ն որոշման N 1 հավելվածի 12-րդ կետի «դ» ենթակետով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2014 թվականի նոյեմբերի 19-ի N 1308-Ն որոշման 1-ին կետով հաստատված հավելվածի 5.1-րդ և 5.2-րդ կետերը.

**Հ Ր Ա Մ Ա Յ ՈՒ Մ Ե Մ՝**

1. Հաստատել քվոտավորման ենթակա կազմակերպությունների համար տվյալ հարկային տարում քվոտավորման ենթակա աշխատատեղերի, տվյալ ամսվա դրությամբ քվոտայի պահանջը չկատարած աշխատատեղերի քանակների վերաբերյալ տեղեկատվությունը Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության (այսուհետ՝ նախարարություն) պաշտոնական կայքէջում ([www.mlsa.am](http://www.mlsa.am)) տեղակայելու և թարմացնելու ընթացակարգը՝ համաձայն հավելվածի:

2. Սահմանել, որ՝

1) նախարարության սոցիալական ապահովության պետական ծառայությունը (այսուհետ՝ ծառայություն) յուրաքանչյուր երեքշաբթի «Նորք» տեղեկատվավերլուծական կենտրոն» փակ բաժնետիրական ընկերությանն (այսուհետ՝ «Նորք» ՏՎԿ) է տրամադրում Հայաստանի Հանրապետության կառավարության 2012 թվականի N 1676-Ն որոշմամբ սահմանված կարգով հարկային մարմնից ստացված՝ սույն հրամանի 1-ին կետով հաստատված

հավելվածով սահմանված ընթացակարգի կիրարկումն ապահովելու համար անհրաժեշտ տեղեկատվությունը.

2) սույն հրամանի 1-ին կետով հաստատված հավելվածով սահմանված ընթացակարգի ապահովման նպատակով ծառայության կողմից «Նորք» ՏՎԿ-ին տրամադրվող տեղեկատվությունը և տեղեկատվության տրամադրման կարգը փոխհամաձայնեցվում են ծառայության և «Նորք» ՏՎԿ-ի միջև:

3. «Նորք» ՏՎԿ-ի տնօրենին՝ ապահովել սույն հրամանի 1-ին կետով հաստատված հավելվածով սահմանված ընթացակարգի 1-ին կետի կատարումը:

4. Նախարարության աշխատակազմի աշխատանքի և գրադվածության վարչության պետին՝

1) անհրաժեշտ մասնագիտական աջակցություն ցուցաբերել «Նորք» ՏՎԿ-ին և ծառայությանը՝ սույն հրամանի 2-րդ կետով նախատեսված գործընթացների շրջանակներում անհրաժեշտ հաշվարկների իրականացման ժամանակ ծագած խնդիրների լուծման նպատակով.

2) ապահովել սույն հրամանի 1-ին կետով հաստատված հավելվածով սահմանված ընթացակարգի 2-րդ կետի կատարումը.

3) Հայաստանի Հանրապետության կառավարության 2014 թվականի նոյեմբերի 19-ի N 1308-Ն որոշման 1-ին կետով հաստատված հավելվածի 2-րդ և 2.1-րդ կետերում նշված կազմակերպությունների կողմից գրավոր դիմում ներկայացվելու դեպքում հինգ աշխատանքային օրվա ընթացքում տալ լրացուցիչ տեղեկատվություն և խորհրդատվություն տվյալ կազմակերպությունում քվոտավորման պահանջի և (կամ) մասհանման կատարման ապահովման վերաբերյալ:

5. Սույն հրամանի կատարման նկատմամբ հսկողությունը վերապահում եմ ինձ:



**Ա. ԱՍԱՏՐՅԱՆ**

## Ը Ն Թ Ա Ց Ա Կ Ա Ր Գ

### **ՔՎՈՏԱՎՈՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՄԱՐ ՏՎՅԱԼ ՀԱՐԿԱՅԻՆ ՏԱՐՈՒՄ ՔՎՈՏԱՎՈՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ ԱՇԽԱՏԱՏԵՐԵՐԻ, ՏՎՅԱԼ ՊԱՀԻ ԴՐՈՒԹՅԱՄԲ ՔՎՈՏԱՅԻ ՊԱՀԱՆՋԸ ՉԿԱՏԱՐԱԾ ԱՇԽԱՏԱՏԵՐԵՐԻ ՔԱՆԱԿՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԻ ԵՎ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՀԱՐՑԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ԿԱՅՔԷՋՈՒՄ ՏԵՂԱԿԱՅԵԼՈՒ ԵՎ ԹԱՐՄԱՑՆԵԼՈՒ**

1. «Նորք» տեղեկատվավերլուծական կենտրոն» փակ բաժնետիրական ընկերությունը՝

1) մինչև 2016 թվականի փետրվարի 20-ը ուսումնասիրում է պետական կառավարչական հիմնարկների և համայնքային կառավարչական հիմնարկների, Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի, պետական ոչ առևտրային և համայնքային ոչ առևտրային կազմակերպությունների կողմից հարկային մարմին ներկայացված աշխատողների անձնավորված հաշվառման վերաբերյալ 2015 թվականի հարկային տարվա (հունվարի 1-ից դեկտեմբերի 31-ը ներառյալ) տեղեկատվությունը և կազմում է այն կազմակերպությունների ցանկը, որոնց աշխատողների միջին տարեկան քանակը 100 և ավելի է.

2) 2017 թվականից սկսած յուրաքանչյուր տարի՝ մինչև տվյալ տարվա փետրվարի 20-ը, ուսումնասիրում է պետական կառավարչական հիմնարկների և համայնքային կառավարչական հիմնարկների, Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի, պետական ոչ առևտրային և համայնքային ոչ առևտրային կազմակերպությունների կողմից հարկային մարմին ներկայացված աշխատողների անձնավորված հաշվառման վերաբերյալ նախորդ հարկային տարվա (հունվարի 1-ից դեկտեմբերի 31-ը ներառյալ) տեղեկատվությունը և կազմում է այն կազմակերպությունների ցանկը, որոնց աշխատողների միջին տարեկան քանակը 100 և ավելի է.

3) մինչև 2017 թվականի փետրվարի 20-ը ուսումնասիրում է ոչ պետական կազմակերպությունների կողմից՝ բացառությամբ համայնքային կառավարչական հիմնարկների և համայնքային ոչ առևտրային կազմակերպությունների, հարկային մարմին ներկայացված աշխատողների անձնավորված հաշվառման վերաբերյալ 2016 թվականի հարկային տարվա (հունվարի 1-ից դեկտեմբերի 31-ը ներառյալ) տեղեկատվությունը և կազմում է այն կազմակերպությունների ցանկը, որոնց աշխատողների միջին տարեկան քանակը 100 և ավելի է.

4) 2018 թվականից սկսած յուրաքանչյուր տարի՝ մինչև տվյալ տարվա փետրվարի 20-ը, ուսումնասիրում է ոչ պետական կազմակերպությունների կողմից՝ բացառությամբ համայնքային կառավարչական հիմնարկների և համայնքային ոչ առևտրային կազմակերպությունների, հարկային մարմին ներկայացված աշխատողների անձնավորված հաշվառման վերաբերյալ նախորդ

հարկային տարվա (հունվարի 1-ից դեկտեմբերի 31-ը ներառյալ) տեղեկատվությունը և կազմում է այն կազմակերպությունների ցանկը, որոնց աշխատողների միջին տարեկան քանակը 100 և ավելի է.

5) կազմակերպությունների աշխատողների միջին տարեկան թվաքանակը հաշվարկվում է Հայաստանի Հանրապետության կառավարության 2014 թվականի նոյեմբերի 19-ի N 1308-Ն որոշման հավելվածով հաստատված կարգի 3-րդ և 4-րդ կետերի պահանջներին համապատասխան.

6) սույն կետի 1-4-րդ ենթակետերով նախատեսված ուսումնասիրություններից հետո համադրում է 100 և ավելի միջին տարեկան թվաքանակ ունեցող կազմակերպությունների աշխատողների տվյալները հաշմանդամություն ունեցող անձանց հաշվառման «Փյունիկ» տեղեկատվական համակարգի տվյալների հետ՝ այդ կազմակերպություններում հաշմանդամություն ունեցող աշխատողների թվաքանակը պարզելու, ինչպես նաև հաշմանդամություն ունեցող յուրաքանչյուր աշխատողի՝ տվյալ կազմակերպությունում քվոտայի պահանջի առաջացման տարվա ընթացքում աշխատած օրերի քանակը հաշվարկելու նպատակով.

7) սույն կետի 6-րդ ենթակետով նախատեսված համադրումից հետո՝ մինչև տվյալ տարվա փետրվարի 22-ը, կազմում է աղյուսակ՝ սույն ընթացակարգին կից ձևին համապատասխան, և ներկայացնում է Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության (այսուհետ՝ նախարարություն) աշխատակազմի աշխատանքի և զբաղվածության վարչություն.

8) սույն կետի 7-րդ ենթակետում նշված աղյուսակի տվյալները վերանայում և ըստ անհրաժեշտության թարմացնում է սույն կետի 1-4-րդ ենթակետերում նշված ժամկետներից հետո՝ ամսական պարբերականությամբ, մինչև տվյալ տարվա դեկտեմբերը ներառյալ.

9) սույն կետի 8-րդ ենթակետում նշված աղյուսակը (թարմացված) մինչև տվյալ ամսվան հաջորդող ամսվա 22-ը ներկայացնում է նախարարության աշխատակազմի աշխատանքի և զբաղվածության վարչություն:

2. Նախարարության աշխատակազմի աշխատանքի և զբաղվածության վարչությունը սույն ընթացակարգի 1-ին կետի 7-րդ և 9-րդ ենթակետերում նշված աղյուսակները ստանալուց հետո մեկ աշխատանքային օրվա ընթացքում դրանք տեղակայում է նախարարության պաշտոնական ([www.mlsa.am](http://www.mlsa.am)) կայքէջում:

**Տ Ե Ղ Ե Կ Ա Տ Վ ՈՒ Թ Յ ՈՒ Ն**

Կազմակերպությունների քվոտավորման ենթակա աշխատատեղերի և քվոտայի պահանջը չկատարած աշխատատեղերի թվի վերաբերյալ

դրությամբ

(նշվում է հաշվետու տարին և ամիսը)

Հ/Հ	Կազմակերպության անվանում	Կազմակերպության ՀՎՀՀ	Կազմակերպության սեփականության ձևը	Քվոտավորման ենթակա աշխատատեղերի թիվը	Քվոտայի պահանջը չկատարած աշխատատեղերի թիվը	Մասհանվող գումարի ընդհանուր չափը (ՀՀ դրամ)
(1)	(2)	(3)	(4)	(5)	(6)	(7)

1. Աղյուսակի 4-րդ սյունակում պետական կառավարչական հիմնարկների և համայնքային կառավարչական հիմնարկների, Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի, պետական ոչ առևտրային և համայնքային ոչ առևտրային կազմակերպությունների համար լրացվում է «պետական» բառը, իսկ ոչ պետական կազմակերպությունների համար՝ բացառությամբ համայնքային կառավարչական հիմնարկների և համայնքային ոչ առևտրային կազմակերպությունների՝ լրացվում է «ոչ պետական» բառերը:

2. Աղյուսակի 5-րդ սյունակում լրացվում է տվյալ կազմակերպության համար քվոտավորման ենթակա աշխատատեղերի թիվը, որը հաշվարկվում է հետևյալ ձևով՝

1) պետական կազմակերպությունների (պետական կառավարչական հիմնարկների և համայնքային կառավարչական հիմնարկների, Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի, պետական ոչ առևտրային և համայնքային ոչ առևտրային կազմակերպություններ) դեպքում՝ քվոտավորման ենթակա աշխատատեղերի թիվը հավասար է տվյալ կազմակերպության աշխատողների միջին տարեկան քանակի երեք տոկոսին.

2) ոչ պետական կազմակերպությունների դեպքում՝ բացառությամբ համայնքային կառավարչական հիմնարկների և համայնքային ոչ առևտրային կազմակերպությունների, քվոտավորման ենթակա աշխատատեղերի թիվը հավասար է տվյալ կազմակերպության աշխատողների միջին տարեկան քանակի մեկ տոկոսին.

3) սույն կետի 1-ին և 2-րդ ենթակետերում նշված տոկոսների կիրառման արդյունքում տասնորդական կոտորակային թիվ ստացվելու դեպքում այն կլորացվում է մինչև միավորները, ընդ որում, տասնորդական կոտորակի ստորակետից հետո հինգից ցածր թվանշանի դեպքում հավասարեցվում է իրենից ցածր բնական թվին, իսկ տասնորդական կոտորակի ստորակետից հետո հինգ և բարձր թվանշանի դեպքում՝ իրենից վերև ընկած բնական թվին:

3. Աղյուսակի 6-րդ սյունակում լրացվում է տվյալ կազմակերպության համար քվտավորման ենթակա և քվտայի պահանջը չկատարած աշխատատեղերի թիվը, որը հաշվարկվում է հետևյալ ձևով՝ քվտավորման ենթակա աշխատատեղերի թվից (աղյուսակի 5-րդ սյունակ) հանվում է այն աշխատատեղերի թիվը, որոնք քվտայի պահանջի առաջացման տարվա ընթացքում (հունվարի 1-ից դեկտեմբերի 31-ը ներառյալ) սկսվող կամ ավարտվող 12-ամսյա ցանկացած ժամանակահատվածում առնվազն 183 օր զբաղեցված են եղել հաշմանդամություն ունեցող և տարիքային կենսաթոշակի իրավունք տվող՝ տարիքը չլրացած անձանց կողմից:

4. Տվյալ հարկային տարին համարվում է (հունվարի 1-ից դեկտեմբերի 31-ը ներառյալ) կազմակերպության համար քվտայի պահանջի առաջացման տարի, եթե նախորդ հարկային տարում կազմակերպության աշխատողների միջին տարեկան թվաքանակը 100 և ավելի է:

5. Քվտայի պահանջի առաջացման տարվա դեկտեմբերի դրությամբ՝ աղյուսակի 6-րդ սյունակում լրացված ցուցանիշը համարվում է տվյալ տարվա համար քվտավորման ենթակա և քվտայի պահանջը չկատարած (մասհանման հաշվարկի համար հիմք հանդիսացող) աշխատատեղերի թիվ:

6. Աղյուսակի 7-րդ սյունակում լրացվում է քվտայի պահանջի չկատարման դեպքում տվյալ կազմակերպության կողմից մասհանվող գումարի ընդհանուր չափը, որը հաշվարկվում է հետևյալ ձևով՝ քվտայի պահանջը չկատարած աշխատատեղերի թիվը (աղյուսակի 6-րդ սյունակ) բազմապատկվում է «Նվազագույն ամսական աշխատավարձի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 3-րդ հոդվածով սահմանված նվազագույն աշխատավարձի (1000 ՀՀ դրամ) երեքհարյուրապատիկի չափով: